h.1632533
10-09-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Երևանի քաղաքապետարան*

Դիմող՝ *ԷԴԳԱՐ ՂԱՁԱՐՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

ԴԻՄՈՒՄ

Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին

Հանրային հավաքի անցկացման մասին իրազեկում

Հիմք ընդունելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ, տեղեկացնում եմ, որ 2025 թվականի սեպտեմբերի 26-ին 10:00-ից մինչև 22:00 մեր նախաձեռնությամբ անցկացվելու են հանրային հավաք։

1. Հանրային հավաքը նախատեսվում է անցկացնել Երևան քաղաքի Բաղրամյան 19 հասցեում, Ազգային ժողովի գլխավոր մուտքի դարպասների մոտ։
2. Հավաքը նախատեսվում է մեկնարկել նշված օրը ժամը 10:00-ից և ավարտել մինչև 22:00։
3. Հավաքի նպատակն է ոգեկոչել 2020 թվականի 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակը և պահանջել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից՝ անվստահություն հայտնել ՀՀ վարչապետին։
4. Հավաքին նախատեսվում է մոտավորապես 3.000 մարդու մասնակցություն։ Մասնակիցների մասին հնարավոր առավել ստույգ կլինի կանխատեսումներ անել հավաքից մի քանի օր առաջ՝ սպասվող հանրային արձագանքներից ելնելով։
5. Հավաքին հնարավոր է օգտագործել ստացիոնար կամ շարժական բեմահարթակ, լուսային էկրան, բարձրախոսներ, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական դրոշներ, հնարավոր են պաստառներ և այլն։
6. Հավաքում կարգադրիչների մասնակցություն չի նախատեսվում։
7. Հավաքի ընթացքում հնարավոր են անցկացվեն երթեր՝ Բաղրամյան պողոտա – Դեմիրճյան փողոց - Բաղրամյան պողոտա երթուղով (երթերի անցկացման ժամկետների մասին կտեղեկացվի Ոստիկանության ներկայացուցիչներին)։
8. Հանրային հավաքի կազմակերպիչն ու ղեկավարն է հանդիսանում

Խնդրում ենք օպերատիվ կարգով, բջջային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրել տվյալներ Երևանի քաղաքապետարանի այն պաշտոնատար անձի մասին (անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն, բջջային և աշխատանքային հեռախոսահամարներ, էլեկտրոնային փոսի հասցե), որի հետ հնարավոր կլինի հետագայում օպերատիվ կապ պահպանել՝ նաև «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 5-րդ կետով սահմանված դեպքերում։

Դիմող՝

ԷԴԳԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ